ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7—8, 1945 *Общественные науки*

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1945 թ. նոյեմբերի 20-ից մինչև 22-ը տեղի ունեցան Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր Ժողովի հոբելյանական նիստերը՝ նվիրված Հայաստանում Սովետական Իշխանության հաստատման 25-րդ տարեդարձին։

Ընդհանուր Ժողովի նիստերում լսվեցին հետևյալ զեկուցումները.

1. Գիտության զարգացումը Սովետական Հայաստանում (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ, ՍՍՌՄ ԳԱ թղթակից անդամ Վ. Հ. Համբարձումյան)։

2. Հայասան որպես հայերի բնօրրան (հայերի ծագման հարցի շուրջը) (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ա. Ղափանցյան)։

3. Հին և նոր հայագիտությունը (ֆիլոլոգ. գիտ. դոկտոր Ա. Ս. Ղարիբյան)։

4 Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ, ակադեմիկոս Հ. Հ. Մանանդյան)։

5. Սովետական պատմավեպը (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Հ. Տերտերյան)։

6. Սովետական ֆիզիոլոգիայի հաջողությունները (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ ակադեմիկոս Լ. Ա. Օրբելի)։

7. Քնի բուժիչ դերը (ՍՍՌՄ ԳԱ թղթակից անդամ Է. Հ. Հասրաթյան)։

8. Երկրաբանության հաջողությունները Սովետական Հայաստանում (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Կ. Ն. Պաֆենգոլց)։

9. Ֆիլոգենետիկ կառուցումների սկզբունքների և մեթոդների մասին (ՀՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Ա. Լ. Թախտաջյան)։

10. Ամիգները որպես զեղամիջոցների աղբյուր (քիմ. գիտութ. դոկտոր Ա. Լ. Մնջոյան)։

* * *

Նոյեմբերի 20-ին, Ընդհանուր Ժողովի կապակցությամբ, բացվեց ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հոբելյանական ցուցահանդեսը, որն արտացոլում էր գիտության բնագավառում ձեռք բերված հաջողությունները։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահությունը 1945 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում լսելով Ակադեմիայի Հասարակական գիտությունների Բաժանմունքի զեկուցումը 1945 թ. գիտա-հետազոտական աշխատանքների արդյունքների և 1946 թ. հիմնական պրոբլեմների մասին, ընդունեց հետևյալ որոշումը.

1. Արձանագրել, որ Հասարակական գիտությունների Բաժանմունքի գիտական հիմնարկները 1945 թ. ընթացքում ձեռք են բերել զգալի հաջողություններ, իրագործելով գիտական, տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք աշխատանքներ պատմության, գրականության, լեզվի և երաժշտության պատմության բնագավառներում։ ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, Հայպետհրատի և Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական Համալսարանի հրատարակությամբ լույս են տեսել հետևյալ աշխատությունները.

ա) ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Սա. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարանի» վերջին, 4-րդ հատորը.

բ) Ակադեմիկոս Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» եռահատոր աշխատության 1-ին հատորը.

գ) ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ղափանցյանի «Արա Գեղեցկի պաշտամունքը».

դ) ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Տերտերյանի «Հայ կլասիկներ» աշխատությունը.

Շուտով լույս կտեսնեն՝ ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Հր. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» 2-րդ հատորը և «Հայոց անձնանունների բառարան» 2-րդ հատորը.

Նշման արժանի գործեր են՝ «Հայ ժողովուրդը հայրենական պատերազմի մարտական մասնակից» ռազմ. ժողովածուն, Մ. Ներսիսյանի կազմած «Հայ ժողովրդի պատմության» ձեռնարկի 2-րդ հատորը, Կարմիր-բլուրի պեղման հնագիտական հաջող աշխատանքները. ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ հանգուցյալ Մ. Արեղյանի «Հայոց հին գրականության պատմության» 2-րդ հատորը կազմելու և խմբագրելու աշխատանքը (կիսով չափ անտիպ ժառանգության հիման վրա), Ռաչատուր Աբովյանի գրական ժառանգության երկու հատորի պատրաստումը («Դիվան», հ. 2-րդ, Երկեր, հ. 2-րդ), ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ղափանցյանի «Հայ ժողովրդի ծագումը» աշխատությունը, Ռուս-հայերեն (լույս տեսած) և հայ-ռուսերեն (տպագրության պատրաստ) համառոտ բառարանները, ինչպես նաև ընթացիկ տարում կազմակերպված ցուցահանդեսները, հայրենական պատերազմին նվիրված քանդարանի հիմնադրումը և, մանավանդ, Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 25-ամյակին նվիրված ցուցահանդեսը.

2. Հիմնականում հաստատել Հասարակական գիտությունների Բաժանմունքի հիմնարկների 1946 թ. աշխատանքների պլանը և հանձնարարել Բաժանմունքին ըստ ամենայնի խուսափել բազմապրոբլեմայնությունից և ինստիտուտների պլանները կենտրոնացնել կարևորագույն և անհետաձգելի հարցերի շուրջը. Այդ տեսակետից ճիշտ համարել Պատմության ինստիտուտի 1946 թ. պլանի մեջ «Հայ ժողովրդի պատմությունը» պրոբլեմի ընդգրկումը 6 կամ ավելի հատորներում.

3. Հանձնարարել Հասարակական գիտությունների Բաժանմունքին՝ առավել չափով ուշադրություն դարձնել հետևյալ հարցերի վրա.

ա) Պատմության ինստիտուտի գծով.—Առանձնակի շեշտ դնել հնագիտական աշխատանքների վրա և, Կարմիր-բլուրի հետ միասին, պեղման առաջնահերթ օբյեկտներ դիտել Արտաշիսյան և Արշակունյան դինաստիաների ժամանակաշրջանի պատմությունը լրացնող Արմավիրի և մանավանդ Գառնիի և այլ նման օբյեկտները. Հատուկ ուշադրություն դարձնել նաև աղբյուրագիտական աշխատանքների վրա՝ հրատարակելով էպիգրաֆիկ և կարևոր արխիվային նյութեր առանձին պրակներով-սերիաներով. Շտապ կարգով ծավալել աշխատանքները Հայրենական պատերազմի կարիքների գծով.

բ) Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի գծով—Ըստ ամենայնի ապահովել հայ գրականության հաջորդ 4 հատորների վրա տարվելիք աշխատանքները այն հաշվով, որ 6-րդ հատորը (Սովետահայ գրականություն) հիմնականում պատրաստ լինի 1946 թ. վերջին. Մինչև 1948 թ. ապահովել Հ. Աբովյանի երկերի 8-հատորյակից առնվազն չորս հատորի հրատարակությունը, նրա՝ Հ. Աբովյանի մահվան 100-ամյակի կապակցությամբ. Միաժամանակ առանձին ուշադրություն դարձնել արխիվային-գրական նյութերի հավաքման, կենտրոնացման վրա և ուժեղացնել տուն-քանդարանների կազմակերպման գործը.

գ) Ն. Մառի անվան Լեզվի ինստիտուտի գծով.—Նկատի առնելով լեզվի նորմավորման և բարբառագիտության բնագավառում անհետաձգելի ու կարևոր աշխատանքները, գիտական կադրերով ապահովել բոլոր սեկտորները, սկսել ռուս-հայերեն և ապա հայ-ռուսերեն մեծ բառարանները կազմելու աշխատանքը և 1946 թվականից ինստիտուտում ստեղծել հին (ուրարտերեն, խեթերեն), արևելյան (պարսկերեն, արաբերեն, հնդկերեն) և անդրկովկասյան (աղբբեջաներեն, վրացերեն և այլն) լեզուների սեկտոր, որի համար այժմյանից հավաքագրել համապատասխան ասպիրանտներ. Շտապեցնել բարբառների ու միջին հայերենի ուսումնասիրության աշխատանքները, սկսել գիտական տերմինների ու բառերի մշակման գործը, կապ հաստատելով համապատասխան գիտա-հետազոտական ու շահագրգռված այլ հիմնարկների հետ, այդ կապակցությամբ կյանքի կոչելով նորմավորման հանձնաժողովը.

դ) Պատմական թանգարանի գծով.—Պատրաստել նոր կադրեր ազգագրության, դրամագիտության ու հնագիտության գծով և հատուկ ուշադրություն դարձնել վիմագիր արձանագրությունների հավաքման և հրատարակման գործի վրա.

ե) Երաժշտության պատմության և տեսության սեկտորի գծով.—Հատուկ ուշադրություն դարձնել հիմնարկի հարուստ արխիվային ֆոնդերը գիտականորեն պահպանելու և մշակելու

գործի վրա, այն հաշվով, որ ժողովածուում յուրաքանչյուր վավերագիր ունենա իր բարը, ծրարը և անոտացիան. միաժամանակ հատուկ ուշադրություն դարձնել ֆոլկլորային երաժշտական նյութերի հավաքման գործին (ձայնագիր գործիքով և այլ միջոցներով).

գ) Ասպիրանտների և գիտական աշխատակիցների որակավորման կապակցությամբ մեկ ամսվա ընթացքում պատրաստել այն գիտական աշխատակիցների և ասպիրանտների ցուցակը, որոնք կարիք ունեն գործուղվելու Միության կենտրոնները (Մոսկվա, Լենինգրադ և այլն).

է) Գազմել արտասահմանում հայերեն և օտարալեզուներով լույս տեսած խիստ անհրաժեշտ գիտական այն գրականության ցուցակը, որի կարիքը մեծ է և հնարավոր չէ գտնել Սրեանի գրադարաններում.

3. Հանձնարարել Հասարակական գիտությունների Բաժանմունքի մեջ մտնող գիտական հիմնարկներին՝ լայն չափով աշխատանքի ներգրավել Ակադեմիայի սիստեմից դուրս գտնվող կարևոր գիտական ուժերին, որոնք կարող են լրացնել հասարակական գիտությունների բնագավառի այս կամ այն բացը, առաջին հերթին նկատի ունենալով անհետաձգելի թեմաները։

ՀԱՆՐԱԿԱՆ ՍԵՍԻԱՆԵՐ

ՀՍՍՌ ԳԱ Հասարակական գիտությունների Բաժանմունքը և այդ Բաժանմունքի մեջ մտնող գիտա-հետազոտական ինստիտուտները 1945 թվականի ընթացքում կազմակերպեցին հետևյալ գիտական հանրալսանական սեսիաները.

1. Գիտական սեսիա՝ նվիրված Ա. Ս. Գրիբոյեդովի ծննդյան 150-ամյակին. 1945 թվի հունվարի 13-ին Ակադեմիայի նիստերի դահլիճում կայացավ ՀՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի և Պատմության ինստիտուտի միացյալ գիտական սեսիան՝ նվիրված Ա. Ս. Գրիբոյեդովի ծննդյան 150-ամյակին։ Սեսիայում լսվեցին հետևյալ երեք զեկուցումները. ա) «Ա. Ս. Գրիբոյեդովը ռուս մեծ դրամատուրգ» (զեկուցող՝ ֆիլ. գիտ. թեկնածու Ռ. Վարդազարյան), բ). «Ա. Ս. Գրիբոյեդովը հայ ժողովրդի բարեկամ» (զեկուցող՝ պատմ. գիտ. թեկնածու Վ. Պարսամյան), և գ). «Ա. Ս. Գրիբոյեդովի խոսքի արվեստը և Գ. Սունդուկյանը» (զեկուցող՝ պրոֆ. Գ. Աբով).

Հունվարի 24-ին Գրական թանգարանի ցուցասրահում բացվեց Ա. Ս. Գրիբոյեդովի կյանքին ու գործունեությանը նվիրված ցուցահանդես, որը կազմակերպել էին Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի Գրական թանգարանը, Կերպարվեստի թանգարանը և Ա. Սյասնիկյանի անվան հանրային գրադարանը։

2. Գիտական սեսիա՝ նվիրված Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակին. 1945 թ. սեպտեմբերի 26—27-ին Ակադեմիայի նիստերի դահլիճում կայացավ Գրականության ինստիտուտի 3-րդ սեսիան՝ նվիրված 18-րդ դարի հայ մեծ բանաստեղծ-երգիչ Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակին։ Սեսիայում լսվեցին հետևյալ զեկուցումները. ա) «Սայաթ-Նովան գրական-հասարակական մտքի պատմության մեջ» (զեկուցող՝ ֆիլ. գիտ. թեկնածու Ս. Հարությունյան), բ) «Սայաթ-Նովայի արվեստի ժողովրդական հնարները» (զեկուցող՝ ֆիլ. գիտ. թեկնածու Ա. Ղանալանյան), գ) «Սայաթ-Նովայի բարբառային լեզուն» (զեկուցող՝ ֆիլ. գիտ. դոկտ.-պրոֆեսոր Ա. Ղարիբյան), դ) «Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների» (զեկուցող Թբիլիսիի Պետ. համալսարանի պրոֆեսոր Ա. Բարամիձե) և ե) «18-րդ դարի ազրբեջանական պոեզիան և Սայաթ-Նովան» (զեկուցող՝ Ազր. ՍՍՌ ԳԱ գիտ. աշխատակից, ֆիլ. գիտ. թեկնածու Համիդ Արասլի).

3. ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտական սեսիան.— 1945 թ. հոկտեմբերի 29—31-ը կայացավ ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի գիտական սեսիան՝ նվիրված Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 25-րդ տարեդարձին։ Սեսիայում լսվեցին ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ղափանցյանի զեկուցումը՝ «Հայաստան որպես հայերի բնօրրան» (հայերի ծագման հարցի շուրջը), ՀՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Լ. Մելիքսեթ-Բեկի զեկուցումը՝ «Դավիթ անհաղթի՝ Վրաստանում լինելու հարցի շուրջը», պատմ. գիտությունների դոկտոր-պրոֆ. Վ. Ռշտունու զեկուցումը՝ «Հայ լիբերալները Անդրկովկասի կապիտալիզմի զարգացման մասին», պատմ. գիտ. թեկնածու Ս. Երեմյանի զեկուցումը՝ «Կարսի (Վանանդի) թագավորությունը», փիլ. գիտությունների դոկտոր Վ. Զալյանի զեկուցումը՝ «Արիստոտելի արժանարանության մեկնաբանությունը հին հայաս-

տանում։ Բովանդակալից և վերին աստիճանի հետաքրքիր էր ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ղափանցյանի զեկուցումը։ Հենվելով պատմական և լեզվական ավյալների վրա, զեկուցողը համոզիչ կերպով ապացուցեց, որ հայ ժողովրդի կազմավորումը տեղի է ունեցել ոչ թե Բալկաններից և Փոքր Ասիայից եկած ցեղերից, ինչպես այդ պնդում է հնդեվրոպական տեսությունը, այլ Փոքր Հայքում բնակվող ցեղերից, հատկապես հայաստ ցեղից։ Հետաքրքիր էր և ՀՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Լ. Մելիքսեթ-Բեկի զեկուցումը։ Վրաստանի արխիվներում հայտաբերած փաստերի հիման վրա զեկուցողը հանգում է այն եզրակացությանը, որ 8-րդ դարի հայանի հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթը իր կյանքի վերջին օրերը անց է կացրել Վրաստանում, թողնելով խոշոր ազդեցություն այնտեղ ապրող հայերի կուլտուրական կյանքի զարգացման վրա։ Պատմ. գիտութ. դոկտոր-պրոֆեսոր Վ. Ռշտունու զեկուցումը լուսաբանեց հայ լիբերալների դերը կապիտալիզմի զարգացման հանդեպ Անդրկովկասում։ Գիտութ. թեկնածու Ս. Իրեմյանը մանրամասնորեն կանգ առավ Կարսի (Վանանդի) հայկական թագավորության ծագման և նրա զարգացման պատմության վրա, շեշտելով այն խոշոր դերը, որ նա ունեցել է հայկական պետականության և կուլտուրայի զարգացման գործում։ Փիլ. գիտությունների դոկտոր Վ. Զալյանը զեկուցելով Արիստոտելի արամաբանության մեկնաբանության մասին հին Հայաստանում, շեշտեց, որ այդ մեկնաբանությունը մատերիալիստական բնույթ կրելով, ձգտում էր պաշտպանել երկրի անկախությունը օտար նվաճողներից։ Գիտական սեսիայում գրված բոլոր զեկուցումները լավագույն մեծ հետաքրքրությամբ։

4. Հասարակական գիտությունների Բաժանմունքի սեսիան.— 1945 թ. նոյեմբերի 18—19-ը տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հասարակական գիտությունների Բաժանմունքի սեսիան՝ նվիրված Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 25-րդ տարեդարձին։ Սեսիայի առաջին նիստում, նոյեմբերի 18-ին, զեկուցումներով հանդես եկան պատմ. գիտութ. թեկնածու Մ. Ներսիսյանը՝ «Պատմագրությունը Սովետական Հայաստանում», ՀՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Բ. Պիոտրովսկին՝ «Սկյութները Անդրկովկասում» և ֆիլ. գիտութ. թեկնածու Է. Աղայանը «Հայ լեզվաբանությունը 25 տարում» թեմաներով։ Նոյեմբերի 19-ի նիստում զեկուցումներով հանդես եկան ֆիլ. գիտ. թեկնածու Գ. Սեվակը՝ «Հայոց լեզվի զարգացման սովետական ոլորտը» և ֆիլ. գիտ. թեկնածու Ա. Առաքելյանը «Սովետահայ գրականությունը 25 տարում» թեմաներով։

5. ՀՍՍՌ ԳԱ Ն. Մառի անվան Լեզվի ինստիտուտի գիտական սեսիան.— 1945 թ. դեկտեմբերի 26—30-ը տեղի ունեցավ ՀՍՍՌ ԳԱ Ն. Մառի անվան Լեզվի ինստիտուտի գիտական սեսիան՝ նվիրված Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 25-ամյակին։ Սեսիայում լսվեց հինգ զեկուցում։ Առաջին օրը զեկուցեցին Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Լ. Մելիքսեթ-Բեկը՝ «Հին Ռուսիան և հայերը» և Ինստիտուտի ավագ գիտ. աշխատակից Գ. Սեվակը «Ժամանակակից հայերենի պատմության պերիոդիզացիան» թեմաների շուրջը։

Ընկ. Լ. Մելիքսեթ-Բեկը միջա- և լեզվաստեղծման հարակցությունները նկատի ունենալով՝ նշեց այն հնագույն հարաբերությունները, որոնք եղել են հայերի և հին Ռուսիայի միջև։ Այդ հարաբերություններն արտացոլել են ինչպես սուսերենի, նույնպես և հայերենի մեջ, ինչպես նաև այդ երկու ժողովուրդների էպոսների, հարաբարեկամության, սովորությունների և կրոնական պաշտամունքների մեջ։

Ընկ. Գ. Սեվակը իր հավաքած փաստական հարուստ նյութի հիման վրա նշեց, որ արևելյան գրական աշխարհաբարի պատմությունը պետք է սկսել 18-րդ դարից։ Նա գրական աշխարհաբարի պատմությունը բաժանում է չորս հիմնական շրջանի, յուրաքանչյուրի համար հաշվի առնելով տերիտորիալ, տնտեսական-քաղաքական-գաղափարախոսական և լեզվական հատկանիշների ամբողջությունը։ Առաջին շրջանն ընդգրկում է 17—18-րդ դարերը, երկրորդ շրջանը՝ 19-րդ դարի սկզբից մինչև 70-ական թվականները, երրորդ շրջանը՝ 19-րդ դարի 70-ական թվականներից մինչև 1920 թիվը, չորրորդ շրջանը՝ 1920 թվից հետո։

Սեսիայի հաջորդ նիստերում զեկուցեցին Ինստիտուտի ավագ գիտ. աշխատակիցներ ընկ. ընկ. Ա. Մուրվալյանը՝ «Հայ-վրացական լեզվամատնագրության ընդհանրությունները», Ս. Ղազարյանը՝ «Ռուսերենի դերը արդի հայերենի զարգացման մեջ» և Գ. Ֆասարյանը՝ «Հայ բառաբանագրությունը 25 տարում» թեմաների շուրջը։

Ընկ. Ա. Մուրվալյանը իր զեկուցման մեջ ցույց տվեց, որ մարդու ինքնագիտակցման և աշխարհաճանաչման ընդհանուր պրոցեսում բազմաթիվ դարվածքներ ու արտահայտություններ կապվել են, նախ և առաջ, մարդու մարմնի գանազան անդամների (օր. ձեռքի,

ոտքի, գլխի, աչքի, բերանի, երեսի, լեզվի, սրտի և այլնի) հետ, ինչպես նաև մարդուն շրջապատող դանազան առարկաների հետ։ Դրանք հնագույն լեզվաստեղծողության տարբեր վերապրուկներ են՝ պահպանված այսօր իբրև յուրահատկություններ։ Նման յուրահատկություններով հարուստ են առանձնապես հայոց և վրաց լեզուները։ Զեկուցողը չի բացասում նաև այն ընդհանրությունները, որ հայոց և վրաց լեզուները միաժամանակ ունեն ուրիշ լեզուների հետ (հաճախ իրար հետ ոչ մի կապ չունեցող լեզուների հետ)։ Իսկ սրանով նա հակադրվում է այն «տեսակետին», որ աշխատում է ամեն ինչ բացատրել փոխառությունների միջոցով։

Ընկ. Հազարյանը հայտնեց, թե իր ուսումնասիրությունը բաժանված է երեք շրջանի. առաջին շրջանն ընդգրկում է 7—8-րդ դարերից մինչև 19-րդ դարը և բնորոշվում է որպես ոուս և հայ ժողովուրդների կուլտուրաների ու լեզուների փոխադարձ խաչավորման ու ներգործության շրջան։ Երկրորդ շրջանը սկսվում է 19-րդ դարի առաջին կեսից. այդ շրջանում վերջնականապես ձևավորվում է հայ ժողովուրդը որպես ազգ, հիմնականում ավարտվում է հայ ազգային լեզվի կազմավորումը։ Երրորդ շրջանը սկսվում է մեր երկրում սոցիալիստական կարգեր հաստատվելուց հետո և բնորոշ է նրանով, որ այդ շրջանում որակական նոր աստիճանի է բարձրանում մեր լեզուն և սկսում է զարգանալ ռուսաց լեզվի բարերար ազդեցության տակ։

Ընկ. Գ. Գասպարյանը զեկուցեց «Հայ բառարանագրությունը 25 տարում» թեմայի մասին։ Նա համառոտակի ուրվագծեց նախքան Հայաստանում Սովետական կարգերի հաստատվելը եղած հայ բառարանագրության պատմությունը, ապա հիմնականում կանգ առավ Հայաստանի 25-ամյա ժամանակաշրջանի բառարանագրության արժանիքների վրա, հատկապես ընդգծելով ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամներ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան», Ս. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարան» և Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարան» արժանիքների վրա։ «Գիտությունների Ակադեմիայի Ն. Մառի անվան Լեզվի ինստիտուտը,—ասաց ընկ. Գասպարյանը,—իր արժանի տեղն ունի հայ բառարանագրության մեջ։ Ինստիտուտը հրատարակել է Ռուս-հայերեն համառոտ բառարան, այժմ հրատարակվում է Հայ-ռուսերեն համառոտ բառարանը»։ Բոլոր զեկուցումները հագեցված էին հարուստ փաստերով և լսվեցին հետաքրքրությամբ։

6. ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Երաժշտության պատմության և թեորիայի Սեկտորի գիտական սեսիան.—1945 թ. դեկտեմբերի 11—13-ին տեղի ունեցավ Երաժշտության պատմության և թեորիայի սեկտորի սեսիան՝ նվիրված Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 25-ամյակին։ Սեսիայում առաջ քաշվեցին հայկական երաժշտության պատմության ու տեսության ուսումնասիրման բնագավառին վերաբերող մի շարք կարևոր և ակտուալ պրոբլեմներ։

Սեսիայի առաջին նիստում զեկուցող Ա. Ս. Շավերդյանը (արվեստի վաստակավոր գործիչ) հաղորդեց Կոմիտասի ազգագրական ժառանգությունն ուսումնասիրելու գծով իր կատարած աշխատանքի արդյունքների մասին։ Կոմիտասի, որպես ազգագրագետի՝ գործունեությունը զեկուցողն ընդգրկեց սպառիչ կերպով։ Զեկուցման առավել հետաքրքրական մասը կազմում էր Կոմիտասի ընտրած և ժողովրդական երգի ոսկե ֆոնդը հանդիսացող երգերի տեսական վերլուծությունը։ Զեկուցողին հաջողվեց բացահայտել հայկական ֆոլկլորի ինտոնացիայի, ռիթմի և, առավելապես, ձևի հիմքում ընկած յուրահատուկ օրինաչափությունները, ինչպես նաև ցույց տալ այդ ֆոլկլորի ժանրային ամբողջ բազմազանությունը։

Սեսիայի երկրորդ նիստում «Հայ եկեղեցական երաժշտության պատմական արժանները» թեմայի շուրջը զեկուցումով հանդես եկավ արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Ս. Գուշչարյանը։ Հայ եկեղեցական երաժշտության ծագման հարցը պարզելու նպատակով զեկուցողը որպես համեմատական նյութ մեջ բերեց Առաջավոր Ասիայի մյուս ժողովուրդների երաժշտական ստեղծագործությունները։ Համադրման միջոցով զեկուցողն ապացուցեց, որ հայ եկեղեցական երաժշտությունն իր արմատներով գալիս է դարերի խորքից և սերտ ազգակցության մեջ է Առաջավոր Ասիայի ու Միջագետքի հնագույն կուլտուրաների հետ։

Երրորդ զեկուցումը (զեկուցող՝ արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Գ. Տիգրանյան) նվիրված էր հայ երաժշտական թատրոնի պատմության ամենահետաքրքիր և համարյա թե բոլորովին չուսումնասիրված բնագավառին՝ Գ. Զուխաջյանի օպերային ժառանգությանը։

Զուխաջյանի արխիվի ձեռագիր նյութերի ուսումնասիրության հետևանքով Գ. Գ.

Ցիգրանյանին հաջողվել է երեսուն բերել եւ վերականգնել «Ալյակ Բ» և այլ օպերաների չափազանց արժեքավոր պարտիտուրաները, դրանով իսկ լույս սփռելով հայկական օպերայի կազմավորման վաղ շրջանի վրա։

Զեկուցողը հանգամանորեն լուսաբանեց Գ. Զուխաջյանի ստեղծագործական կերպարը և ավեց նրա օպերաների եւ օպերետների լուրջ վերլուծությունը։

Բոլոր զեկուցումները լավեցին մեծ հետաքրքրություն առաջացրին ներկա մարդկանց մեջ փոխանակություն։

[illegible]